ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«13» հոկտեմբերի 2022թ.
No Շ/934-2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ

Առանձին տեսակի ապրանքների դասակարգման վերաբերյալ

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներն իրականացնելու նպատակով և ի կատարումն Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 24.06.2021թ. թիվ 36/10 և 30.09.2022թ. թիվ 39/7, 39/8 և 39/9 որոշումների՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն պարզաբանում է հետևյալը

1. Միաբևեռ և երկբևեռ բարձրհաճախական մալուխները, որոնք կիրառվում են բժշկական էնդոսկոպիկ սարքավորման և գործիքների հետ համատեղ՝ էնդոսկոպիկ գործիքը բարձրհաճախական էլեկտրավիրաբուժական գեներատորի հետ միացման համար, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին կանոնին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **8544 ապրանքային դիրքում**:

2. Հիմնահյուսվածքով տրիկոտաժե մեքենայագործ քաթանները՝ 100% պոլիէսթերի պարունակությամբ, 30 սմ-ից ավելի լայնությամբ, սանրման եղանակով խավավորված, այսինքն՝ այնպիսի սարքավորման միջոցով քաթանների լրացուցիչ մշակմամբ, որոնք համալրված են հատուկ խավավորման հարմարանքներով (խոզանակներով, ելուստներով), արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին կանոնին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **6005 ապրանքային դիրքում**:

3. Չժանգոտվող պողպատից գլանաձև տարողությունները (գլանանոթները/բալոնները)՝ բկանցքով և պարուրակով՝ փակման-գործարկման սարքի կամ ռոգիչի հետագա տեղադրման համար, արտաքինից ներկված կամ չներկված, 1-ից մինչև 120 լիտր տարողությամբ, որոնք նախատեսված են կրակմարիչ նյութով լիցքավորման համար, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին կանոնին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **7310 ապրանքային դիրքում**:

4. Ժելատինե դեղապատիճների տեսքով արտադրանքը, որոնք պարունակում են ձկան յուղ, բուսական յուղ, վիտամիններ և այլ օժանդակ նյութեր՝ նախատեսված մարդու սննդի մեջ հավասարակշռված (բալանսավորված) հավելումների համար որպես Օմեգա-3 պոլիչհագեցած ճարպաթթուների և վիտամինների լրացուցիչ աղբյուր, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին կանոնին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **1517 ապրանքային դիրքում**:

5. Ծխախոտի տաքացվող գլանակները (սթիքեր), որոնք պատրաստված են ծխախոտից կամ վերականգնված ծխախոտից՝ գլիցերինի, գուարի խեժի, ցելյուլոզային մանրաթելի, պրոպիլեն գլիկոլի, էթանոլի և բուրավետիչների պարունակությամբ՝ նախատեսված էլեկտրոնային սարքի (EHTS) միջոցով առանց այրման ներշնչելու համար, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ կանոններին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **2404 11 000 ստորաենթադիրքում**:

6. Մեկանգամյա օգտագործման անհատական էլեկտրոնային սիգարետները (սարքերը)՝ լիցքավորված առանց այրման ներշնչելու համար հեղուկներով կամ գելերով, որոնք նախատեսված չեն հետագայում վերալիցքավորման համար, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 3 (բ)

կանոններին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **2404 ապրանքային դիրքում**:

6.1. Առանձին ներկայացված՝ ծխախոտ կամ վերականգնված ծխախոտ չպարունակող հեղուկները (օրինակ՝ գլիցերինի, պրոպիլեն գլիկոլի, բուրավետիչների և այլ նյութերի պարունակությամբ), որոնք նախատեսված են անհատական էլեկտրոնային սիգարետների (սարքերի) միջոցով առանց այրման ներշնչելու համար, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ կանոններին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **2404 12 000 0 կամ 2404 19 000 ստորաենթադիրքում**՝ կախված այդ հեղուկներում նիկոտինի առկայությունից:

6.2 Առանձին ներկայացված անհատական էլեկտրոնային սիգարետները (սարքերը), արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ կանոններին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի **8543 40 000 0 ստորաենթադիրքում**:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԾՈՎԻՆԱՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Կատարող՝ ապրանքների դասակարգման
և սակագնային կարգավորման բաժին